# Սովորողի մեջ համագործակցային կարողությունների զարգացումը առարկայի դասավանդման գործընթացում

**Թամարա Մելիքբեկյան**

# Բովանդակություն


- Ներածություն
- Ինչպես են մարդիկ սովորում
- Ինչպես են սովորողները մշակում տեղեկատվությունը
- Ոչ ֆորմալ կրթական համակարգի էությունը
- Մեթոդների ընտրություն և ադապտացիա
- Եզրակացություն և առաջարկություններ
- Օգտագործված գրականության ցանկ

# Ներածություն

Ես լսում և մոռանում եմ: Ես տեսնում և հիշում եմ: Ես կատարում և հասկանում եմ:

Կոնֆուցիոս

Միջազգային կրթական համակարգում տարածված է այն գաղափարը, որ հնարավոր չէ սովորեցնել ուրիշներին և այդ ընթացքում չսովորել և, որ կրթական միջավայրը պետք է հաճելի լինի ինչպես ուսուցանողների, այնպես էլ մասնակիցների համար:

Ուսուցանողները պետք է սովորեցնեն տարբեր մեթոդներով՝ ըստ մասնակիցների ունակությունների և հմտությունների՝ մշակելով վարժություններ/աշխատանքներ, որոնց մասնակիցները կմոտենան տարբեր տեսանկյուններից: Ուսուցանողները նախ և առաջ պետք է կարողանան օգտագործել տարբեր ռազմավարություններ և հաշվի առնել լսարանի բազմազանությունը՝ ներգրավելով վերջիններիս: Տարբեր ռազմավարությունների վրա հիմնված կրթական համակարգը պահանջում է ուսուցման հնարքների մի ամբողջ շարք, այդ թվում՝ լսել, մասնակցել, բանակցություններ վարել և մտորել: Մի մասնակցի համար կիրառելի ուսուցման մեթոդը կարող է կիրառելի չլինել մյուսի համար: Ուստի, կարևորելով մասնակիցների ներգրավվածության ապահովումը, ուսուցանողները պետք է հաշվի առնեն բազմազանության բոլոր ձևերը, որոնք են՝

- ✓ Գիտելիքների տարբեր մակարդակները,
- ✓ Գենդերային տարբերությունները,
- ✓ Մշակութային և լեզվական տարբերությունները,
- ✓ Տարբերությունները՝ մանրամասնությունների մեջ խորանալու ցանկության և պահանջի,
- ✓ Ուսուցման նախընտրելի մեթոդների տարբերությունները,
- ✓ Մասնակցելու ցանկության տարբերությունները,
- ✓ Հակասական ցանկությունները և մտադրությունները և այլն:

«Ինչպե՞ս ներգրավել մասնակիցներին», «Ի՞նչ նմեթոդներ կիրառել», «Ինչպե՞ս կազմակերպել և անցկացնել դասընթացը» հարցերի պատասխանների

արդիականությունը կարևորելով՝ հետազոտության առարկա ենք ընտրել «Սովորողի մեջ համագործակցային կարողությունների զարգացումը առարկայի դասավանդման գործընթացում» թեման՝ անդրադառնալով վերոնշյալ հարցերի պատասխաններին:

# Ինչպես են մարդիկ սովորում

Մարդիկ կարիք ունեն իմաստավորելու իրենց փորձը և այդ անում են նոր տեղեկատվության լույսի ներքո տեսություններ ստեղծելով ու վերաստեղծելով: Ինչպե՞ս են սովորում մարդիկ: Այս հարցին միասնական, եզակի մոտեցում չկա: Հարցի ամենաճշգրիտ պատասխանը հավանաբար սա է. նրանք սովորում են տարբեր եղանակներով: Շատ տեսություններ կան այն մասին, թե ինչպես է սովորում մարդը. դրանցից յուրաքանչյուրը նշում է դասավանդման և ուսուցման գործընթացի զանազան կողմերը: Ուսումնասիրենք դրանցից մի քանիսը:

- **Շարժառիթներ** - Սովորողներն ավելի շատ ճիգ են գործադրում, երբ որևէ խթան ունեն՝ սովորելու պահանջ կամ ցանկություն: Շարժառիթների ձևավորման այն իրավիճակը, ուր կհայտնվի սովորողը, պետք է համապատասխան և իմաստալից լինի իրենց համար:

**Անհատական առանձնահատկություններ -** Մարդիկ սովորում են տարբեր արագությամբ և տարբեր մեթոդերով՝ կախված իրենց մտավոր կարողություններից, կրթության մակարդակից, անհատականությունից և ճանաչողական ուսման ոճից: Պետք է կանխատեսել, որ տարբեր մարդկանց ընկալունակության արագությունը տարբեր է, որը և պետք է հաշվի առնել ուսուցման մեթոդները մշակելիս:

**Ուսուցման նպատակները -** Երբ սովորողները գիտեն, թե ինչ կարող են սովորել, հաջողության հավանականությունն ավելի մեծ է, քան երբ նրանք չգիտեն:

**Բովանդակության կազմումը -** Ավելի դյուրին է սովորել, երբ ուսուցման բովանդակությունը, գործընթացն ու դասավանդվող հմտությունները կազմակերպված են խելացի հաջորդականությամբ:

**Հույզերը -** Ուսուցման ընթացքում գործում է ո՛չ միայն միտքը (ինտելեկտը), այլ նաև՝ հույզերը: Սովորողների դրական կամ բացասական հուզական տրամադրվածությունը կարող է նպաստել կամ խանգարել ուսուցմանը: Չափավոր անհանգստությունը կամ մարտահրավերը ակտիվացնում է սովորողների մեծամասնությանը, սակայն չափազանց անհանգստությունը խանգարում է ուսուցմանը:

**Մասնակցությունը -** Սովորելու համար մարդը պետք է յուրացնի տեղեկատվությունը: Հետևաբար, ուսուցումը գործնական փորձ է պահանջում:

**Հետադարձ կապի ապահովում** - Ուսուցողական գործընթացն ավելի արդյունավետ է, երբ մարդը պարբերաբար գիտակցում է, որ առաջ է ընթանում: Հաջողությունը խթանում է ուսման գործընթացը՝ ամրապնդելով սովորողի ինքնավստահությունը:

Գործնական փորձը, կրկնությունը և գործնական կիրառումը.Հազվադեպ է հաջողվում, միանգամից որևէ նոր բան՝ ամբողջությամբ յուրացնել: Ամբողջական ընկալում տեղի է ունենում միայն այն ժամանակ, երբ սովորողն ընդունակ է՝ ստացած գիտելիքները կիրառել անակնկալ իրավիճակներում և նոր հիմնախնդիրներ լուծելիս: Նախ, սովորողները պետք է սովորեն բացահայտել այս կամ այն խնդրի կամ թեմայի հետ կապված օրինաչափությունները (հասկացությունները, սկզբունքները, կանոնները), այնուհետև նրանց պետք է հնարավորություն տրվի՝ այդ ընդհանրացումները կիրառել տարբեր իրական հիմնախնդիրների և իրավիճակների պարագայում:

Կրթության ժամանակակից պատկերացումների համաձայն՝ տեղեկատվությունը հիշվում է[1].

- ✓ Միայն ընթերցմամբ - 10%-ով
- ✓ Միայն լսողությամբ - 20%-ով
- ✓ Տեսողությամբ - 30%-ով
- ✓ Տեսողությամբ և լսողությամբ - 50%-ով
- ✓ Խոսելով և կրկնությամբ - 80%-ով
- ✓ Խոսելով և գործադրելով - 90%-ով:

Այս տվյալները ցույց են տալիս, որ ուսման ընթացքում, որքան բարձր է սովորողների ներգրավվածության ու մասնակցության մակարդակը, այնքան ավելի արդյունավետ է ուսուցումը: Սա հատկապես ակնհայտ է դառնում, երբ տեղեկությունը՝ գործողությունների միջոցով փոխակերպվում է վարքագծի և իմացության՝ փոխելով նաև սովորողների վերաբերմունքը:

Շատ մասնագետների կարծիքով, արդյունավետ ուսուցման համար պետք է առկա լինեն նաև այլ որոշակի պայմաններ: Գրականության մեջ նշված է, որ մասնակիցները լավ են սովորում, եթե՝

- Նրանց չի անհանգստացնում անհաջողությունը
- Ռիսկը և սեփական սխալների վրա սովորելը պարգևատրվում է
- Ուսումնական գործընթացում խրախուսվում է ակտիվ մասնակցությունը

[1] Пособие для координаторов неформального образования, Под редакцией и при участии Сабине Клокер

- Նրանք շարժվում են հայտնիից դեպի անհայտը
- Երկու և ավելի զգայարաններ են գործի դրված
- Նրանց հասկանալի են ուսուցման պատճառները
- Նրանց ներդրումը դրական է գնահատվում
- Հնարավորություն ունեն իրենց իմացությունը կիրառել տարբեր իրավիճակներում
- Ուսուցանողը ուսուցման ընթացքում կանոնավոր կերպով մեկնաբանում է յուրաքանչյուրի առաջադիմությունը
- Նրանք համատեղ աշխատելու հնարավորություն ունեն
- Տեղեկատվությունը տրվում է հեշտ յուրացվող քիչ մասնաբաժիններով
- Ուսուցանողը խմբի հանդեպ հարգանք է ցուցաբերում, իսկ մասնակիցները՝ միմյանց
- Նրանք գործ ունեն բազմազան իրավիճակների հետ և օգտվում են տարբեր ռեսուրսներից
- Ուսուցումը կապվում է իրական կյանքի և գործնական իրավիճակների հետ
- Նրանք հնարավորություն են ստանում ճշտել իրենց սեփական արժեքները
- Ուսուցումն իմաստալից է և նպատակաուղղված
- Ուսուցման ընթացքում խրախուսվում է հաղորդակցումը և համագործակցությունը
- Նրանք սովորելու պահանջ են զգում
- Ուսուցման միջավայրը հոգևոր առումով և սոցիալապես անվտանգ է
- Նրանց հնարավորություն է ընձեռված մասնակցելու հետազոտական զրույցների
- Նրանք ինքնուրույն են սահմանում ուսուցման նպատակները
- Նրանք գիտեն, թե ինչ արդյունքներ են իրենցից սպասվում
- Ներկայացվում են գործընթացների ու ռազմավարությունների ընդունելի մոդելները
- Նրանք սպասում են, որ ինչ-որ բան կսովորեն
- Նրանց անցած փորձը գնահատվում և հիմք է ընդունվում
- Պահպանվում է արդյունքի հասնելու պահանջմունքն ու ձգտումը
- Նրանք ունեն ստեղծագործական և քննադատական մտածողության ազատություն:

## Ինչպես են սովորողները մշակում տեղեկատվությունը

Մարդիկ տարբեր եղանակներով են սովորում, որը մասամբ պայմանավորված է բնական խառնվածքով: Ոմանց ոգևորում է գաղափարների աշխարհը, մյուսներին՝ առարկայականը, երրորդներին՝ միջանձնային հարաբերությունները, չորրորդներին՝ ֆիզիկական գործունեությունը: Մարդու սովորելու տեսակը որոշելու համար սովորաբար կիրառում են երեք զգայարանների եղանակը: Մարդը սովորում է իր հինգ զգայարանների օգնությամբ՝ տեսողական, լսողական, շոշափելիքի, հոտառության, համի: Այս զգայարանների, մասնավորապես, առաջին երեքի միջոցով է տեղի ունենում տեղեկատվության մուտքը, պահպանումը և արտահոսքը[2]:

- Տեսողություն (տեսողական եղանակ),
- Լսողություն (ունկնդրողական եղանակ),
- Շոշափելիք/գործողություն (շոշափողական/կինետիկ եղանակ):

Ուսումնասիրենք ուսուցման երեք հիմնական եղանակների առանձնահատկությունները:

ՏԵՍՈՂԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ՝

- Պետք է տեսնեն, որպեսզի հասկանան,
- Գերադասում են կարդալ/դիտել հեռուստացույց,
- Չեն սիրում անկանոնություն կամ շարժում,
- Չեն սիրում առարկաներ, նկարներ կամ սխեմաներ դիտել,
- Բառերի ուղղագրությունը հիշում են տեսողաբար,
- Մոռանում են անունները, սակայն հիշում են դեմքերը,
- Ինչ-որ բան տեսողականացնելով՝ տեսնում են հստակ պատկերներ,
- Ձայրանալիս լռակյաց են դառնում,
- Սիրում են մարդկանց հետ խոսել դեմ առ դեմ,
- Գուշակում են տրամադրությունը՝ դեմքին նայելով,
- Ունակ են արագ տեղեկատվություն հավաքելու,

[2] «Երիտասարդության հետ աշխատանքի ոչ ֆորմալ կրթության այբբենարան», Ատոմ Մխիթարյանի խմբագրությամբ

- Դիտունակ են,
- Գերադասում են ինքնուրույն կարդալ, այլ ոչ՝ ուրիշներն իրենց համար,
- Հիշում են՝ նայե լով նկարներին,
- Դժվարությամբ են մտապահում բանավոր հրահանգները,
- Ավելի շատ կենտրոնանում են ենթատեքստի և խնդիրների վրա, քան մարդկանց,
- Գրավոր առաջադրանքները կամ ընթերցանությունը մյուսներից արագ են կատարում,
- Տեղեկատվության մեծ մասը հիշում են, բայց ոչ երկար ժամանակով,
- Խմբում իրենց ավելի լուռ ու հանգիստ են պահում,
- Ամեն ինչում ձգտում են կատարելության (հակված են պերեկցիոնիզմի):

ԼՍՈՂԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ՝

- Հնչյուններով են մտածում,
- Ձայները նրանց գրավում ու շեղում են,
- Սիրում են լսել և կատարել երաժշտություն,
- Ընթերցելիս՝ սիրում են «լսել» երկխոսություններ,
- Բառերը գրելիս օգտվում են հնչյունաբանությունից,
- Սիրում են լսել, ունկնդրել, բայց անհամբեր են խոսակցության ժամանակ,
- Մոռանում են դեմքերը, բայց հիշում են անունները,
- Անգործ ժամանակ խոսում են իրենք իրենց հետ,
- Դյուրագրգիռ են,
- Սիրում են հեռախոսով հաղորդակցվել,
- Մաթեմատիկան և գրավոր աշխատանքը նրանց դժվարությամբ է տրվում,
- Սիրում են խոսել,
- Ունակ են նմանակելու ձայնի տոնը, երանգն ու բարձրությունը,
- Մտածում են բարձրաձայն,
- Բանավոր խոսքը նրանց հեշտությամբ է տրվում,
- Ընթերցելուց շարժում են շուրթերը՝ արտասանելով բառերը:

ՇՈՇԱՓՈՂԱԿԱՆ/ԿԻՆԵՏԻԿ ԵՂԱՆԱԿՈՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ՝

- Սիրում են սովորել շարժվելով,
- Շարժը գրավում է նրանց,

- Գերադասում են սպորտը, խաղերը,
- Սիրում են պարել,
- Ավելի լավ հիշում են այն, ինչն իրենք են արել,
- Որպես հավանության նշան, ափով թեթևակի խփում են դիմացինի մեջքին,
- Կարդալ շատ չեն սիրում, գերադասում են սուր սյուժեով պատմվածքներ,
- Ուղղագրության ճշտությունը որոշում են «զգացումով»,
- Ինչ-որ բան հիշելիս՝ զգացմունքներ են վերապրում,
- Արձագանքում են նյութական/ֆիզիկական վարձատրությանը,
- Ունեն երկարաժամկետ հիշողություն,
- Ընթերցելու ժամանակ հետևում են մատով,
- Շատ են շարժվում,
- Խոսքերը նրանց համար շատ բան չեն նշանակում,
- Հիշում են տարածության մեջ դասավորությունը,
- Գերադասում են գործել, այլ ոչ՝ կարդալ գործողությունների մասին,
- Շատ են ձեռքերով շարժումներ/ժեստեր անում,
- Սովորում են նորից ու նորից կրկնելով:

## Ոչ ֆորմալ կրթական համակարգի էությունը

Մասնակիցներին կրթական գործընթացներում ներգրավելու համակարգը ոչ ֆորմալ կրթական համակարգն է: Ոչ ֆորմալ կրթական համակարգը ըստ **«ՀՀ ոչ ֆորմալ կրթության հայեցակարգի»** նպատակ ունի *զարգացնել անձի քաղաքական, քաղաքացիական, սոցիալական, տնտեսական և մշակութային մասնակցությունը հանրային կյանքում, նրա կարողությունները, հմտությունները, արժեքային համակարգը և գիտելիքները, որոնք ձեռք են բերվում ֆորմալ կրթության համակարգից դուրս, կամ դրան համընթաց:* Այսինքն այս սահմանումից իսկ երևում է, որ այս երկու կրթական ինստիտուտների (ֆորմալ և ոչ ֆորմալ) դերերը և նպատակները տարբեր են:

Եթե փորձենք հասկանալ, թե որոնք են այն արժեքային և բարոյահոգեբանական հիմնական առանցքները որոնց վրա կառուցված է ոչ-ֆորմալ կրթությունը ապա կստացվի հետևյալ պատկերը:

Ոչ ֆորմալ կրթության համակարգը առավելությունը տալիս է մասնակիցների կողմից ուսուցողական արդյունքի **ինքնագնահատմանը,** և չի կարևորում արտաքին դերակատարների կողմից իրականացվող ստուգումը[3]: Եթե դիտարկենք այն խնդիրների դաշտը, որոնք իր դիմաց դնում է ոչ-ֆորմալ կրթությունը, ապա պարզ կդառնա թե ինչու: Քանի որ կրթական գործընթացի հիմնական թիրախը մասնակիցների արժեքային բազաներն են, վարվելակերպի մոդելները և կարծրատիպերը, ապա դրանց ոլորտում փոփոխությունները կարող է ֆիքսել մասնակիցն ինքը: Այս գնահատման սխեման կապված է նաև եվրոպական դաշտում վերջերս խթանվող պորտֆոլիոային ինքնաներկայացման գործընթացի հետ:

Ոչ ֆորմալ կրթությունը **չի խթանում մրցակցությունը** և փոխարենը առաջարկում է ավելի մեծ առաջնայնություն տալ **թիմային փոխօգնող և փոխլրացնող աշխատանքին** և ընդհանուր արդյունքի համար խմբային պատասխանատվության ստանձնմանը: Սա բավականին բարդ ընդունելի սխեմա է, հատկապես հաշվի առնելով այն խնդիրը, որ արդի քաղաքակրթության կյանքի գրեթե բոլոր դաշտերը մեծապես խարսխված են հենց մրցակցության վրա: Սակայն շատ ուսումնասիրողների և բազմաթիվ հոգևոր ուսմունքների կարծիքով արդի հասարակության հիմնական խնդիրները գալիս են հենց անհագուրդ մրցակցությունից:

Ոչ-ֆորմալ կրթությունը խթանում է մասնակիցների կողմից ուսուցողական գործընթացի համար առավելագույն **պատասխանատվության ստանձնումը**: Մասնակիցների համար պետք է ստեղծվեն առավելագույն հնարավորությունները ըստ իրենց պահանջների մոդիֆիկացնելու ծրագիրը, իհարկե ծրագրի նախանական նպատակների և խնդիրների շրջանակներում մնալու պայմանով: Սպառողական մոտեցումը կրթական գործընթացին, ինչպես նաև ծրագրի ընկալումը, որպես քարի վրա գրված անփոփոխելի մի բան, որի հետ կամ պետք է հաշտվես կամ գնաս այլ բան փնտրելու տվյալ պարագայում անընդունելի է: Էական է նաև ճիշտ հասկացված կամավոր մասնակցության սկզբունքը, որը չի նշանակում մասնակցի կողմից կամայական կերպով «ըստ տրամադրության» այս կամ այն ծրագրային կոմպոնենտին մասնակցել կամ չմասնակցելը, սակայն հնարավորություն է ստեղծում և

[3] https://elearning.kasa.am/

խրախուսում է մասնակիցներին գիտակցաբար մասնակցել կամ հիմնավորված կերպով չմասնկացել կրթական գործընթացի այս կամ այն տարրին: Սա նույնպես ուղղված է **պատասխանատու մոտեցման խթանմանը:**

Ոչ ֆորմալ կրթական համակարգը խթանում է մարդու **հարմոնիկ զարգացումը**, երբ ինտելեկտուալ դաշտը գիտի իր տեղը, իսկ զգացմունքային և ֆիզիկական դաշտերը նույնպես զբաղեցնում են իրենց արժանի տեղերը ուսուցողական գործընթացում («Սիրտ-Ուղեղ-Ձեռք») և ընդհանրապես մարդու և քաղաքացու զարգացման գործընթացում: Ուսուցանման հիմքում ընկած են վարվելակերպի մոդելների և արժեքային դաշտի այնպիսի բացերը, որոնք թույլ չեն տալիս քաղաքացիներին ակտիվորեն մասնակցել հասարակության կյանքում ինչպես նաև ինքնադրսեվորվել և ինքնակատարելագործվել:

Ոչ-ֆորմալ կրթության գործընթացում բոլոր գործող դերակատարների հարաբերությունները պետք է լինեն **առավելագույնս հորիզոնական և հիմնված ցանցային համագործակցության** սկզբունքի վրա: Իհարկե կախված գիտելիքների և պատրաստվածության աստիճանից ուսուցանողները գրավում են որոշ չափով ավելի ուժեղ դիրք, սակայն այս պարագայում ոչ այնքան էական է իրականում ստացվող պատկերը, ինչքան ուսուցանողների մոտիվացիան, որոնք ամեն կերպ ՁԳՏՈՒՄ են խուսափել հիերարխիկ հարաբերությունների դաշտից և փորձում են մասնակիցներին բերել իրենց հետ նույն դաշտ, գալով ցանցային հարաբերությունների: Իհարկե շատ հաճախ կարիք է լինում որոշակի խնդիրներ լուծել օգտագործելով «ավելի ուժեղ» դիրքը (հատկապես ճգնաժամային իրավիճակներում կամ խմբի ցրվածության պարագաներում), սակայն էական է, որ ուսուցանողները այդպիսի պահերը գնահատեն որպես ոչ ցանկալի բացառություն, իսկ մասնակիցները հետևեն, որ ուսուցանողները չընկնեն նման դիրքերից կախվածության և հաճույք ստանալու թակարդը:

Եվ վերջապես, կրթական գործընթացներում մասնակիցների ներգրավմամբ մասնակիցների կողմից **գեներացվող գիտելիքը և փորձը** ավելի շատ են գնահատվում, քան ամենապրոֆեսիոնալ փորձագետի կոմից որպես պատրաստի արտադրանք մատուցված գիտելիքը: Թե՛ ուսուցանողները և թե՛ դասընթացի մասնակիցները հանդիսանում են կրթական գործընթացի մասնակիցներ և ներդրում են կատարում իրենց հնարավորությունների ներածին չափով: Բնականաբար (հատկապես այնպիսի երկրներում ինչպիսին Հայաստանն է), խիստ բարդ է կազմակերպել ուսուցողական դասընթաց առանց ֆրոնտալ պրեզենտացիաների և գիտելիքի «տրամադրման», սակայն այստեղ նույնպես

կարևորվում է, որ ուսուցանողները գնում են այդ կոմպրոմիսին և «տրամադրում են», սակայն ներքուստ նրանք շատ ավելի բարձր են գնահատում թեկուզ և ավելի ցածր որակի, սակայն մասնակիցների կողմից գեներացված բովանդակությունն ու գիտելիքը:

## Մեթոդների ընտրություն և ադապտացիա

Կրթության ոլորտի մասնագետների կողմից մշակվել են բազմաթիվ մեթոդներ, վարժություններ, խաղեր, որոնք այսօր օգտագործվում են տարբեր կրթական համակարգերում և լայնորեն կիրառվում ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանությամբ իրականացվող ուսուցողական ծրագրերում: Նմանաբնույթ վարժությունների գործիքարանը բավականին մեծ է և ընդգրկուն, և դժվար է գտնել մի թեմատիկ ոլորտ կամ թիրախային խումբ, որտեղ կամ որի համար չկան մշակված և օգտագործելի, արդյունավետ ու ազդեցիկ մեթոդներ[4]: Հարկ է, սակայն, նշել, որ համապատասխան մեթոդի ընտրությունը հեշտ գործ չէ. այն պայմանավորված է ծրագրի ուսուցողական կարիքներով, յուրահատկությամբ, առաջադրված ընդհանուր և ուսուցողական խնդիրներով ու արդյունքներով, թիրախ խմբով, խմբային գործընթացներով, թեմատիկ զգայունակությամբ, խմբի զարգացման ու ծրագրի տրամաբանությամբ և արժեքներով, ընդհանուր փիլիսոփայական մոտեցումներով և այլն:

Ստորև ներկայացված են հարցերի խմբեր, որոնց շուրջ պետք է խորհել մեթոդներ ընտրելիս սովորողների մեջ համագործակցային կարողությունները զարգացնելու նպատակով:

**Խմբային մակարդակ**

1. Որքանո՞վ է առաջարկված մեթոդը համապատասխանում խմբի ուսուցողական կարիքներին:
2. Արդյո՞ք մեթոդը նպաստում է թիմի ձևավորմանը:
3. Ինչպե՞ս է այն համապատասխանում կոնկրետ ժամանակահատվածի թիմային դինամիկային:
4. Արդյո՞ք ընտրված մեթոդները համապատասխանում են խմբի մասնակիցների ուսուցողական ոճերին, կարիքներին և սովորելու արագություններին:

[4] «Երիտասարդության հետ աշխատանքի ոչ ֆորմալ կրթության այբբենարան», Ատոմ Մխիթարյանի խմբագրությամբ

**Անհատական մակարդակ**

1. Արդյո՞ք առաջարկվող մեթոդն ապահովում է սովորողի ակտիվ մասնակցությունը:
2. Արդյո՞ք մեթոդը զարգացնում է մասնակցի միայն մտավոր դաշտը և հմտությունները, թե նաև իր զգայական ոլորտի հետ կապի մեջ մտնելու համար ժամանակ և հնարավորություն է տրամադրում:
3. Արդյո՞ք մեթոդի շնորհիվ ծագած հարցերը մղում են թեմայի հետագա հետազոտմանը և ուսուցմանը:
4. Արդյո՞ք մեթոդը մասնակիցների ֆիզիկական որոշակի կարողությունների առկայություն է ենթադրում:

**Թեմատիկ մակարդակ**

1. Թեմայի վերաբերյալ ի՞նչ նախնական գիտելիքի պաշար է պահանջում մեթոդը:
2. Ինչպե՞ս է մեթոդը կապված ծրագրային նախկին և հետագա էլեմենտների հետ:
3. Ինչպե՞ս է մեթոդը նպաստում խմբի ներուժի (ներառյալ մասնակիցների տարբեր լրացումները) օգտագործմանը:
4. Տեղեկատվության ո՞ր մասն է տրամադրվում ուսուցանողի կողմից, և ո՞րն է ստեղծվում խմբի կողմից:

**Միջավայր**

1. Արդյո՞ք առաջարկվող մեթոդն իրատեսական է:
2. Արդյո՞ք այն ֆիզիկական և հոգեբանական առումով անվտանգ է:
3. Արդյո՞ք բավականաչափ ժամանակ ունեք փոքր ուշացումներով մեթոդն ամբողջությամբ կիրառելու համար:

Վերոնշյալը ևս մեկ անգամ փաստում է, որ ուսուցանողի մեթոդական կոմպետենտությունը կարևոր սկզբնական «կապիտալ» է հաջող դասընթաց վարելու համար: Լայն իմաստով մեթոդը կանոն է, միջոց, խնդրի լուծման հնարք: Մեթոդաբանություն ասելով նկատի ունենք ավելի բարդ հասկացություն՝ մեթոդների մի

շարք, որոնց դասընթացի ընթացքում դնում ենք շղթայի մեջ՝ այդպիսով կազմակերպելով դասընթացի բոլոր մասնակիցների փոխազդեցությունը[5]:

Եթե մեթոդը, օրինակ մտային գրոհն է, քննարկումը, ներկայացումը, ապա մեթոդաբանությունը կարտացոլի այս մեթոդների համադրությունը կոնկրետ աշխատանք կատարելու համար, որը ուսուցանողը որոշել է կիրառել նախապես: Արդյունքում՝ դասընթացի կանոնների մշակումը կներառի տարբեր մեթոդներ՝ քննարկում, խմբային աշխատանք, ներկայացում: Մեթոդական կոմպետենտությունը ուսուցանողին անհրաժեշտ է ցանկացած իրավիճակում:

Ի՞նչ է «մեթոդական կոմպետենտությունը»: Արդյո՞ք այս հայեցակարգը ներառում է հարյուրավոր մեթոդների անգիր իմացություն և ասոցիատիվ վերարտադրելու կարողություն որևէ բանալի բառ ասելիս: Թե՞ դա հարյուրավոր մեթոդներից մեկը ընտրելու ունակությունն է, որը համապատասխանում է իրավիճակին: Թե՞ դա մեթոդը փոխակերպելու արվեստն է, որպեսզի այն լիովին համապատասխանի յուրահատուկ պայմաններին:

Այս բարդ հայեցակարգը հասկանալու համար եկեք սկսենք հենց սկզբից: Բոլոր մեթոդներն ու մեթոդաբանությունները ժամանակին ինչ-որ մեկի կողմից են հորինվել: Ինչպե՞ս է ծնվում տեխնիկան: Պատկերացրեք այսպես. մեթոդաբանության ապագա հեղինակը դժգոհության զգացում ունի դասընթացի բլոկներից մեկից և այն արդյունքներից, որոնց հանգել են մասնակիցները: Այս մասին մտածելու ընթացքում առաջանում է մի խնդիր, որը լուծելով հնարավոր կլինի ձերբազատվել դժգոհության զգացումից:

Հենց այդ ժամանակ էլ սկսվում է եղածը փոփոխելու կամ նոր մեթոդաբանություն մշակելու միջոցների ու ուղիների որոնումը: Ինչ-որ մեկի կողմից մշակված մեթոդաբանության հիմնական առանձնահատկությունը կայանում է նրա յուրահատկության մեջ: Մեթոդաբանությունները բխում են որոշակի իրավիճակի կարիքներից: Հնարավոր է, որ մի իրավիճակում կիրառված մեթոդաբանությունը նույնքան տեղին լինի այլ իրավիճակում: Բայց, ընդհանուր առմամբ, մեթոդաբանությունը չի կարող համընդհանուր լինել: Աշխատանքի սկզբունքները, մեթոդները, որոնց վրա այն կառուցված

---

[5] «Методические рекомендации» - Тренер группа семинар, Коллегия им. Теодора Хойсса фонда имени Роберта Боша и объединения MitOst

է, կարող են համընդհանուր լինել, բայց այս սկզբունքները ամեն անգամ պետք է հարմարեցվեն իրավիճակին և խմբին, որի հետ կարելի է աշխատել այս համատեքստում:

Մեթոդաբանության օգտագործման արդյունավետությունը կախված է բազմաթիվ գործոններից, ուստի մեթոդաբանության հեղինակները, որպես կանոն, կանխատեսում են դրա իդեալական արդյունքը: Մեթոդաբանությունը գրագետ օգտագործելու համար անհրաժեշտ է այն ինքնուրույն կիրառել բազմիցս: Բոլոր գործոնների գնահատումը տեղի է ունենում գրեթե ինտուիտիվ մակարդակով, և մեթոդաբանության ընտրությանը հաճախ հետևում է դրա փոփոխումը:

## Եզրակացություն և առաջարկություններ

Ոչ ֆորմալ կրթությունը կարելի է ներկայացնել նաև ՈՒՍՈՒՑՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ, որը լայնորեն կիրառում է խմբային աշխատանքը (ի տարբերություն և ի հակադրություն անհատականի): Սրանից զատ, այն նպատակաուղղված է ուսուցանողի մասնակցությանը ուսուցման գործընթացին՝ սովորողների հետ համատեղ: Այստեղ գիտակցաբար խուսափում են «վարող – հետևորդ» հակադրությունից և ձգտում են ստեղծել համագործակցության մթնոլորտ: Ամփոփ կերպով կարող ենք նշել, որ Համագործակցային ուսուցման հիմքում ընկած հիմնադրույթներն ձևակերպվում են հետևյալ կերպ.

- Ուսուցումն ակտիվ գործընթաց է, որի միջոցով սովորողը յուրացնում է տեղեկատվությունը և նոր գիտելիքը համադրում է նախկին գիտելիքների հետ:
- Ուսուցումը պահանջում է մարտահրավեր, ինչը սովորողներին թույլ է տալիս ակտիվորեն համագործակցել միմյանց հետ, մշակել և սինթեզել տեղեկատվությունը, այլ ոչ թե հիշել ու վերարտադրել այն:
- Սովորողների համար օգտակար է ծանոթանալ տարբեր կենսափորձ ունեցող մարդկանց կարծիքների բազմազանությանը:
- Ուսուցումը հաջողություն է ունենում սոցիալական այնպիսի միջավայրում, ուր սովորողները հաղորդակցվում են միմյանց հետ: Նման մտավարժանքի ժամանակ սովորողը ստեղծում է կառուցվածքներ և ձևավորում մտքեր:
- Համագործակցային ուսուցման ընթացքում սովորողները ենթակա են սոցիալական և զգացական ներգործության, քանի որ նրանք լսում են տարբեր կարծիքներ և պետք է արտահայտեն ու պնդեն իրենց տեսակետները:

Այսպիսով, սովորողները սկսում են ստեղծել իրենց յուրահատուկ հայեցակարգային կառուցվածքները: Համագործակցային ուսուցման միջավայրում սովորողներին հնարավորություն է տրվում հաղորդակցվել միմյանց հետ, շարադրել և պնդել մտքեր, տարբեր հայացքներ փոխանակել, կասկածի տակ առնել այլոց հայացքների համակարգը և լինել ակտիվորեն ներգրավված:

Ոչ ֆորմալ կրթության գաղափարաբանությունը ուսուցանողների և մասնակիցների համատեղ կրթությունն է: Պարզապես ուսուցանողի դերն է դասընթացի ընթացքի

կազմակերպումը: Ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանությունը լիարժեքորեն հաշվի է առնում մասնակիցների սովորելու և հմտությունների ձեռքբերման ժամանակակից պատկերացումները: Այն նախևառաջ ձգտում է ուսուցման տարբեր մեթոդների կիրառմանը՝ հաշվի են առնվում տարաբնույթ մշակութային միջավայրերում սովորողների կրթության տարբեր ձևերը՝ անկախ սեռից, ֆիզիկական ունակություններից, սոցիալ-տնտեսական կարգավիճակից և այլն:

Ոչ-ֆորմալ կրթական համակարգը ձևավորվել է ի պատասխան այն մարտահրավերների, որոնք նոր դարաշրջանը ներկայացրեց ֆորմալ կրթական համակարգին և որոնց այն չէր կարողանում գտնել արժանի պատասխաններ:

Ոչ ֆորմալ կրթական համակարգը ձևավորվեց որպես բացերը լրացնող և այլ տիպի քաղաքացի և մարդ ձևավորող համակարգ, որը սակայն չէր հավակնում և չի էլ կարող հավակնել փոխարին ելու ֆորմալ կրթականական համակարգի կողմից տրվող մասնագիտական կրթությունը:

Ուստի առավել տեղին կլինի փաստել, որ մեկը լրացնում է մյուսի բացերը և երկուսն իրար հետ կարողանում են լուծել այս նոր դարաշրջանի առաջադրած խնդիր ները:

Որպես առաջարկություններ կարևորում ենք հետևյալը՝

1. Տարին առնվազն 2 անգամ գործնական, հասցեական, արդյունավետ դասընթացների կազմակերպումը ուսուցանողների համար նոր գործիքներ փոխանցելու նպատակով:
2. Ուսուցանող-մասնակից հարաբերությունների վերաբերյալ հայերեն լեզվով իրազեկող նյութերի տարածումը տարբեր հարթակների միջոցով երեք թիրախ խմբերի համար՝ ուսուցանող-ծնող-մասնակից:
3. Դասընթացների արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ նվազագույն նյութական միջոցների ապահովում ուսուցանողների համար:
4. Պարբերաբար հարցումների անցկացում վերոնշյալ 3 թիրախ խմբերի շրջանակներում:
5. Նոր ծրագրեր մշակելիս, նոր գործիքներ ստեղծելիս հաշվի առնել ՀՀ-ի սոցիալ-տնտեսական, տնտեսաքաղաքական առանձնահատկությունները և տեղայնացնել դրանք:
6. Ֆորմալ կրթական համակարգի և ոչ ֆորմալ կրթական համակարգի օպտիմալ միքս տարբերակի մշակում և կիրառում:

## Օգտագործված գրականության ցանկ


1. «Երիտասարդության հետ աշխատանքի ոչ ֆորմալ կրթության այբբենարան», Ատոմ Մխիթարյանի խմբագրությամբ
2. Пособие для координаторов неформального образования, Под редакцией и при участии Сабине Клокер
3. «Методические рекомендации» - Тренер группа семинар, Коллегия им. Теодора Хойсса фонда имени Роберта Боша и объединения MitOst
4. https://elearning.kasa.am/
5. ՀՀ-ում ոչ ֆորմալ կրթության հայեցակարգ